ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2015 թվականի N 319-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 377-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 17724-15 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 515-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 377-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել ներմարզային երթուղիների մրցութային հանձնաժողովի կազմը՝

1) ***Վալերիկ Բակլաչյան*** - հանձնաժողովի նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Ալեքսան Եղիշյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ,

3) ***Արմեն Հակոբյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

4) ***Վարդան Քալանթարյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

5) ***Համլետ Ստեփանյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

6) ***Վարդան Պողոսյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Կոտայքի հաշվառման-քննական բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ *(համաձայնությամբ)*,

7) ***Հրաչ Ազրոյան*** - հանձնաժողովի անդամ - Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ *(համաձայնությամբ)*.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 02
ք. Հրազդան